# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

« 1 » դեկտեմբերի 2023 թվականի N: 527 -Ա ք.Գյումրի

**«ԳՅՈՒՄՐՈՒ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԱՍՏՂԻԿ ԲԵՅԲՈՒՏՅԱՆԻՆ ՀՂԻՈՒԹՅԱՆ ԵՎ ԾՆՆԴԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 172-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայ օգնության միության «Ախուրյանի մոր և մանկան առողջության կենտրոն» հիմնադրամի կողմից 2023 թվականի դեկտեմբերի 1-ին տրված ZZ N 037907 անաշխատունակության թերթիկը և Աստղիկ Բեյբուտյանի 2023 թվականի դեկտեմբերի 1-ի դիմումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. «Գյումրու Սուրբ Գրիգոր Նարեկացու անվան պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Աստղիկ Բեյբուտյանին տրամադրել հղիության և ծննդաբերության արձակուրդ՝ 2023 թվականի դեկտեմբերի 1-ից մինչև 2024 թվականի ապրիլի 18-ը ներառյալ:
2. Աստղիկ Բեյբուտյանի արձակուրդում գտնվելու ընթացքում «Գյումրու Սուրբ Գրիգոր Նարեկացու անվան պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի լիազորությունները ժամանակավորապես իրականացնող նշանակել նույն ընկերության ընտանեկան բժիշկ Անահիտ Բարխուդարյանին:

Մ.ՄՈՒՐԱԴՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է